ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ և հրապարակվում է “Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի համաձայն

Մրցույթի ծածկագիրը՝ “**ԱՄՕ-ԶՕՎԹՆԱ-66/26**”

“Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ-ի կարիքների ″Զվարթնոց″ օդանավակայանի վազքուղու ծածկույթի՝ ՊԿ 0+00-ՊԿ 10+00 հատվածի և կառամատույց 1, կցորդ Ա տեղամասի նորոգման աշխատանքների ձեռքբերման համար անցկացվող **ԱՄՕ-ԶՕՎԹՆԱ-66/26** ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխությունը և նկարագրությունը՝

N 1 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 2. Որակավորման չափանիշները
Մաս 2 Մասնագիտական փորձառություն՝
նոր խմբագրություն.

Ասֆալտբետոնե ծածկույթների կառուցման աշխատանքների իրականացման ընդհանուր փորձ 01. 01. 2023-31. 12.2025 ընկած ժամանակահատվածում՝

- *Իրականցված պատվածքների (հիմքի լրացուցիչ շերտ, հիմք, երկշերտ ծածկույթ) աշխատանքներ՝*
- *3 տարվա ընթացքում ոչ պակաս 200. 000մ2 մակերեսով;*
- *մեկ պայմանագրով ոչ պակաս 50. 000մ2 մակերեսով;*
- *Իրականցված ծածկույթների (վերին շերտ ասֆալտբետոնի Ա տիպի խառնուրդով) աշխատանքներ՝*
- *3 տարվա ընթացքում ոչ պակաս 100.000մ2 մակերեսով;*
- *մեկ պայմանագրով ոչ պակաս 30.0000մ2 մակերեսով;*
- *Իրականացված ինժեներական կոմունիկացիաներ (ջրահեռացում կամ ջրամատակարարում կամ կապ կամ հեղեղատար կոյուղի կամ էլեկտրամատակարարում)՝ ոչ պակաս 1000գծ. մ:*
- *Հողային աշխատանքների իրականացում՝ 2000մ3, ներառյալ լիցք և հանույթ*
- *Երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացում՝ 100մ3*
- *Մակնիշավորման կամ գծանշման աշխատանքներ՝ 2000մ2*

Սույն մասով սահմանված որակավորման չափանիշները հավաստելու նպատակով, Մասնակիցը իր հայտին կից ներկայացնում է վերը նշված դրույթների, աշխատանքների վերաբերյալ ապացույց հանդիսացող հիմնավոր փաստաթղթեր՝ նշված մակերեսների և ծավալների փորձի ապահովմամբ (օր. կատարողական ակտեր):

- *Վերոդրոմային տարերի իրականացման փորձը կդիտվի որպես առավելություն, հավասար գնառաջարկի դեպքում:*
- *Պոլիմերային հավելանյութերով ծածկույթների իրականացումը կդիտարկվի որպես առավելություն, հավասար գնառաջարկի դեպքում:*

Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հայերեն, այլ լեզուների դեպքում ներկայացվեն հայերեն թարգմանությամբ՝ լիցենզավորված թարգմանչի համապատասխան վավերացմամբ:

<u>ՆՇՈՒՄ՝</u> *Սույն հրավերում նշված ժամկետները հաշվարկվում են՝ հաշվի առնելով հետևյալ իրավական ակտերը. <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 31-ը հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 327 հոդվածը և 328 հոդվածի 1-ին կետը:*

N 2 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը. Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերը բացվում են ԱՄՕ-ի հետևյալ հասցեում՝ Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, N3 վարչական շենքում գտնվող նիստերի դահլիճ՝ 2026թ.-ի ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիրը, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմին նշանակված լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:

N 3 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը. Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերի փաստաթղթային տարբերակով ներկայացման վերջնաժամկետն է 2026թ.-ի ապրիլի 27-ը, ժամը 18:00-ն:

Փոփոխության հիմնավորում: Համաձայն “Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի 5րդ գլխի 19 և 21 կետերի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել “**ԱՄՕ-ԶՕՎԾՆԱ-66/26**” ծածկագրով գնումները համակարգող Գ.Սարգսյանին:

Հեռախոս՝ +374 98 20 82 79:

Էլեկտրանային փոստ՝ gusargsyan@aia-zvartnots.aero

“**ԱՄՕ-ԶՕՎԾՆԱ-66/26**” ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: